ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«17» փետրվարի 2012թ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 33

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի զ) կետը և 7-րդ մասը, «Իրավական-ակտերի մասին» ՀՀ օրենքի գլուխ 1-ի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի N 156-Ն որոշումը և ի կատարումն ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 876-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցի 13-րդ կետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Սևանա լճի առափնյա տարածքներում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման մեթոդական ցուցումները (Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ռեկրեացիոն, լանդշաֆտային, առողջարանային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման նախագծի՝ քաղաքաշինական կանոնադրության, քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների ներառմամբ)» (այսուհետ՝ Մեթոդական ցուցումներ)՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝
Սևանա լճի առափնյա տարածքներում քաղաքաշինության բնագավառի գործունեության շրջանակներում առաջնորդվել Մեթոդական ցուցումների դրույթներով:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

«17» 11 2012թ

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քաղաքաշինության նախարարի «Սևանա լճի առափնյա տարածքներում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հրամանում նշված հավելվածն իրենից ներկայացնում է «Սևանա լճի առափնյա տարածքներում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման մեթոդական ցուցումների (Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ռեկրեացիոն, լանդշաֆտային, առողջարանային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման նախագծի՝ քաղաքաշինական կանոնադրության, քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների ներառմամբ)» նախագծային փաստաթղթերը տեքստային և գրաֆիկական նյութերով՝ 88 էջ ընդհանուր ծավալով ալբոմ, որը հրամանին կցել տեխնիկապես հնարավոր չէ և գտնվում է աշխատակազմի քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչությունում:

քաղաքաշինության քաղաքականության
և տարածական պլանավորման
վարչության պետ՝ Ս. Մաթևոսյան